իրավ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՍՊԱԱ_41_-2020_ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «31» հունվարի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Նաիրի Հարությունյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և և «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ի դեմս նախագահ Գրիգոր Գրիգորյանի, որը գործում է «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919 - Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 14,179,800 ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի N1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրով հիմք հանդիսացող նախահաշվի.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով յուրաքանչյուր միջոցառման ավարտից հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը (հրամանով հաստատված կարգի համաձայն և ժամկետներում) ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.9 չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարը պետական մարմինը փոխանցում է կազմակերպությանը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N2 հավելվածի՝ վճարման ժամանակացույցի:

4.2 Պետական մարմինը վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ չներկայացված հաշվետվության համար պետական մարմնի կողմից հաստատված նախահաշվի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար, իսկ պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը, եթե Պետական մարմնին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տուգանք չկատարած աշխատանքի 0,5 (հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.2. Տույժի և տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից կամ պահանջում է հետ վճարել :

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում 2020 թվականի բյուջետային տարում, իսկ գործողությունը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Խոլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք	ք. Երևան, Եզնիկ Կողբացու 69
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ՎՏԲ Հայաստան բանկ»
հ/հ 900011033330	Հ/Հ՝ 16062002263400
ՀՎՀՀ՝ 02698732	ՀՎՀՀ՝ 02552198
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
_____ Ե. Հարությունյան	_____ Գ. Գրիգորյան
Կ.Տ.	Կ. Տ.

2020 թ. Հունվարի 31-ին
կնքված N ՍՊԱՍ/41 -2019 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	Իրականացվելիք միջոցառման անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1.	ՀՀ առաջնություններ և ՈՄՀ					
	1) ՀՀ շախմատի առաջնություն 2)ՀՀ ազատ ոճի ըմբշամարտի առաջնություն 3)ՀՀ հունա-հռոմեական ըմբշամարտի առաջնություն 4)ՀՀ ֆուտզալի առաջնություն 5)ՀՀ ուսումնամարզական հավաք ըմշամարտի գծով	«Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի կատարող՝ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպության մջոցով	«Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ»	**Արդյունքները** Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի արմատավորում, զանգվածային-մարզական և ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների օրացուցային պլանի կենսագործման ապահովում, հաշմանդամային սպորտի զարգացում, պարապողների մարզական վարպեատության կատարելագործում: **Գնահատման չափանիշները** Վերոնշյալ ցուցանիշների վերլուծություն:	30.12.2020 թ.	3,000,000
2.	Միջազգային միջոցառումներ					
	1) Խուլերի ձյուդոյի աշխարհի առաջնություն	«Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի կատարող՝ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպության մջոցով	«Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ»	Խուլերի ձյուդոյի աշխարհի առաջնությանը Հայաստանի պատվիրակության մասնակցություն: **Գնահատման չափանիշները** Վերոնշյալ ցուցանիշների վերլուծություն:	30.12.2020 թ.	2,796,200
	2) Խուլերի ըմբշամարտի աշխարհի առաջնություն	«Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի կատարող՝ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպության մջոցով	«Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ»	Խուլերի ըմբշամարտի աշխարհի առաջնությանը Հայաստանի պատվիրակության մասնակցություն: **Գնահատման չափանիշները** Վերոնշյալ ցուցանիշների վերլուծություն:	30.12.2020 թ.	8,383,600
Ընդամենը						14,179,800

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011033330
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Եզնիկ Կողբացու 69
«ՎՏԲ Հայաստան բանկ»
Հ/Հ՝ 16062002263400
ՀՎՀՀ՝ 02552198
Նախագահ՝

Գ. Գրիգորյան

Կ. Տ.

Հավելված N2
2020 թ. Հունվարի 31 -ին
կնքված N ՍՊԱՍ 41 -2020 պայմանագրի

«Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպության 2020թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման չափի վճարման ժամանակացույց (աճողական)

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Ընդամենը տարեկան (հազար դրամ)	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից (հազար դրամ), ընդ որում՝											
		1 եռամսյակ			6 ամիս			9 ամիս			տարի		
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
ՀՀ առաջնություններ և ՈՄՀ	**3000.0**	**0.0**	**1058.0**	**1058.0**	**2589.0**	**2589.0**	**2589.0**	**2589.0**	**2589.0**	**2589.0**	**3000.0**	**3000.0**	**3000.0**
ՀՀ շախմատի առաջնություն	355.0	0.0	0.0	0.0	355.0	355.0	355.0	355.0	355.0	355.0	355.0	355.0	355.0
ՀՀ ազատ ոճի ըմբշամարտի առաջնություն	529.0	0.0	529.0	529.0	529.0	529.0	529.0	529.0	529.0	529.0	529.0	529.0	529.0
ՀՀ հունա-հռոմեական ըմբշամարտի առաջնություն	529.0	0.0	529.0	529.0	529.0	529.0	529.0	529.0	529.0	529.0	529.0	529.0	529.0
ՀՀ ֆուտզալի առաջնություն	411.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	411.0	411.0	411.0
ՀՀ ուսումնամարզական հավաք ըմշամարտի գծով	1176.0	0.0	0.0	0.0	1176.0	1176.0	1176.0	1176.0	1176.0	1176.0	1176.0	1176.0	1176.0
Միջազգային միջոցառումներ	**11179.8**	**0.00**	**0.00**	**0.00**	**11179.8**	**11179.8**	**11179.8**	**11179.8**	**11179.8**	**11179.8**	**11179.8**	**11179.8**	**11179.8**
Խուլերի ձյուդոյի աշխարհի առաջնություն	2796.2	0	0	0	2796.2	2796.2	2796.2	2796.2	2796.2	2796.2	2796.2	2796.2	2796.2
Խուլերի ըմբշամարտի աշխարհի առաջնություն	8383.6	0	0	0	8383.6	8383.6	8383.6	8383.6	8383.6	8383.6	8383.6	8383.6	8383.6
Ընդամենը	**14179.8**	**0.0**	**1058.0**	**1058.0**	**13768.8**	**13768.8**	**13768.8**	**13768.8**	**13768.8**	**13768.8**	**14179.8**	**14179.8**	**14179.8**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011033330
ՀՎՀՀ՝ 02698732
Ղեկավոր բարտուղար՝

_____ Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Եզնիկ Կողբացու 69
«ՎՏԲ Հայաստան բանկ»
Հ/Հ՝ 16062002263400
ՀՎՀՀ՝ 02552198

Նախագահ՝

_____ Գ. Գրիգորյան

Կ.Տ.